



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԸ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



Հ.Ս.Ը.Ը.Ը ՓՈՔՐ ՀԱՅԱՍՏԱՆ ՄԸՆ Է ՄԵԾ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՀԱՄԱՐ

ՀԱՅԱՍՏԵՅ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՒ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Արեւմտեան մեր Թեմին շնորհած հովուապետական այցելութեան նախավերջին օրուան՝ Շաբաթ, 22 Յոկտեմբերի երեկոն ունեցաւ Հ.Ս.Ը.Ը.Ը.ական խորագիր: Արդարեւ, Վեհափառ Յայրապետը այցելութիւն մը տուաւ Հ.Ս.Ը.Ը.ի Շրջանային Վարչութեան կեդրոնատեղին, ապա, հովանաւորեց «Վրարատ» մասնաճիւղի հիմնադրութեան 33րդ տարեդարձին նուիրուած տունակատարութիւնը, որ կազմակերպուած էր Կլենտեյլի Civic Auditorium-ին մեջ:

ՎԱՐՉՈՒԹԵԱՆՑ ՀԵՏ

Վեհափառ Յայրապետը Հ.Ս.Ը.Ը.ի Շրջ. Վարչութեան կեդրոնատեղին հասաւ երեկոյեան ժամը 7ին, ուղեկցութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ ժողովականութեան ներկայացուցիչներու: Իկը Ռաքի կեդրոնատեղիին մեջ համախմբուած էին Շրջ. Վարչութեան, մասնաճիւղերու վարչութեանց, սակուտական խմբապետութեան ներկայացուցիչները:

Շրջ. Վարչութեան ատենապետ Տիար Գառնիկ Աբրահամեան ողջունեց հայրապետական շքախումբը եւ ներկայացուց Հ.Ս.Ը.Ը.ականները: Ան հակիրճ կերպով անդրադարձաւ Հ.Ս.Ը.Ը.ի յարկին տակ հայակերտումի ու մարդակերտումի աշխատանքներուն, նշելով, որ անոնք կ'ընդգրկեն նաեւ հոգեւոր դաստիարակութիւն: Ան անդրադարձաւ Ազգ. Առաջնորդարանին հետ Հ.Ս.Ը.Ը.ի գործակցութեան դաշտերուն, նշելով, որ այս շրջանը միակն է, որ «Մեսրոպ Մաշտոց» շքանշանի ծրագիրը կ'իրագործէ Ազգ. Առաջնորդարանին հետ գործակցութեամբ:

Առաջնորդ Մրբազանը անդրադարձաւ Վեհափառ Յայրապետի հովուապետական այս այցելութեան հիմնական նպատակներուն ու իրագործուած հանգրուաններուն, յիշեցնելով, որ Նորին Ս. Օծութիւնը յատուկ կարեւորութիւն ընծայած է ու կ'ընծայէ մարզական այս մեծ միութեան գործունեութեան:

Տեղի ունեցաւ յուշանուերներու փոխանակում: Հանդիպումը շարունակուեցաւ մտերմիկ գրոյցով:

«ԱՐԱՐԱՏ»Ի 33ՎՄԵՎԿ

Վեհափառ Հայրապետն ու շքախումբը այսուհետեւ ուղղուեցան Կլենտեյլի Civic Auditorium-ը, ուր կազմակերպուած էր «Արարատ» մասնաճիւղի 33ամեակի շքեղ տօնակատարութիւնը: Ներկայ էին Հ.Ս.Ը.Մ.ական պատասխանատուներ, ներկայացուցչական դեմքեր, որոնց շարքին՝ խորհրդարանի անդամ Էտըմ Շիֆ, եւ բազմահարիւր հանդիսականներ:

Խօսք առնելով՝ Առաջնորդ Սրբազնը շնորհաւորեց Հ.Ս.Ը.Մ.ը եւ «Արարատ» մասնաճիւղի վարչականներն ու անդամները՝ այս հանգրուանին իրագործման առիթով, վեր առնելով Հ.Ս.Ը.Մ.ի դաստիարակող ու սերունդներ ներշնչող առաքելութիւնը, ապա հրաւիրեց Վեհափառ Հայրապետը՝ ուղղելու իր պատգամը:

Վեհափառ Հայրապետը անդրադարձաւ Հ.Ս.Ը.Մ.ի անցեալի ու ներկայի գործունեութեան, որ ի սպաս կը դրուի մեր ժողովուրդին ու յատկապես մասուկներուն, պատասխիներուն եւ երիտասարդներուն: Ան շեշտեց, որ «Հ.Ս.Ը.Մ.ը ինքնին փոքր Հայաստան մըն է իր ստեղծած ոգեղին մթնոլորտով ու նորահաս սերունդներուն ներշնչած ոգիով. Հ.Ս.Ը.Մ.ը մեր նորահաս սերունդներուն համար կամուրջ մըն է հայրենիքին հետ հաղորդակցութեան իմաստով, անիկա փոքր Հայաստան մըն է Մեծ Հայաստանին համար», ընդգծեց Նորին Ս. Օծութիւնը, եւ մաղթեց, որ մասնաճիւղն ու անոր պատկանած մեծ ընտանիքը արձանագրեն նոր նուաճումներ՝ հայկական մեր կեալքին մէջ:

Հանդիսութեան ընթացքին, Վեհափառ Հայրապետը յուշանուեր մը յանձնեց բարերար Գագիկ Գալստեանի, բարձր գևահատելով անոր նուիրաբերումը: Հիւրընկալ մասնաճիւղի ներկայացուցիչները, իրենց կարգին, յուշանուեր մը յանձնեցին Հայրապետին:

HIS HOLINESS CATHOLICOS ARAM I MEETS WITH HOMENETMEN REGIONAL EXECUTIVE AND PRESIDES OVER "ARARAT CHAPTER" 33RD ANNIVERSARY BANQUET

On Saturday, October 22, 2011, His Holiness Catholicos Aram I met with members of Homenetmen Regional Executive at their headquarters, after which the Pontiff presided over the 33rd anniversary celebration at the Glendale Civic Auditorium.

His Holiness arrived at the Homenetmen headquarters accompanied by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, where he was greeted by the Regional Executive and Homenetmen Scouting Council representatives.

Regional Executive Chair Mr. Garnik Abrahamian welcomed His Holiness and entourage, introduced the members of Homenetmen present, and gave a brief overview of the mission of Homenetmen as relates to the religious and

national instruction of youth. He also spoke of the close collaboration between Homenetmen and the Prelacy, noting that this is the only region with the St. Mesrob Mashdots emblem program which it carries out in conjunction with the Prelacy.

The Prelate reflected on the main themes of the Pontifical Visit, and noted that Homenetmen and its endeavors is of importance to His Holiness.

The meeting came to a close with an exchange of mementos.

His Holiness and entourage then headed to the Glendale Civic Auditorium for the 33rd anniversary celebration of Homenetmen "Ararat" Chapter. Congressman Adam Schiff was among the hundreds of guests in attendance.

The Prelate congratulate the Homenetmen family on their anniversary and commended the organization for the invaluable service and contributions they provide to the lives of our youth. He then invited His Holiness for his message.

His Holiness spoke highly of the past and current endeavors of Homenetmen, and their devoted service for the betterment of our people and specifically our youth. He stated that Homenetmen is a small Armenia, a bridge that unites our youth to our homeland, and wished many more years of successful service to our people.

During the event, His Holiness presented long time Prelacy and community sponsor Mr. Gagik Galstian with a memento, and Homenetmen "Ararat" Chapter members presented a gift to His Holiness.